№ 104 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13 1888 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13 № 104

ՏԱՍՆ ԵՒ Վ. ԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են Իրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ձայնատուութեան սկզբունքը. Տիկին Նիկիֆորովայի գործը. Նամակ Ախալցխայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Standart» լրագրի Կ. Պոլսի հեռագիրը. Հռոմի պապի կոնդակի հարցը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տառադարձութեան խնդիրը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՁԱՅՆԱՏԻՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

—

Սրանից մի քանի ժամանակ առաջ մենք հաղորդեցինք, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան վճռի համաձայն՝ այդ դպրոցի ուսուցիչներից երկուսը, դրանց մէջ և զօկտոր Աւետիք Արասխանեան, որ վարում է ընդհանուր պատմութեան վարժապետի պաշտօնը,—արձակված են իրանց պաշտօններից։

Իսկ Ներսիսեան դպրոցի վերջին քննութիւնների մասին տեղեկութիւններ հաղորդելիս, մենք յայտնեցինք մեր լրագրի միջոցով որ պ. Արասխանեանի առարկայի հարցաքննութիւնները աջող անցան, և ուրախութեամբ շեշտեցինք այն բանի վրա, որ նա ընդհանուր պատմութեան դասատուութեանը տուել էր աւելի զարգացուցիչ, աւելի թարմ բնաւորութիւն։

Դրանից արդէն հեշտ է եղրակացնել, որ պ. Արասխանեանի ուսուցչական պաշտօնից արձակելը,—ոչ ցանկալի և ոչ էլ պէտք էր։ Այդ արձակման առիթով լուրեր էին հաղորդում, որ դրա գլխաւոր շարժառիթը դպրոցի վարժապետների և տեսչի մէջ գոյութիւն ունեցող տարաձայնութիւնները և ինտրիգաներն են և պատմում էին մի շարք այնպիսի մանրամասնութիւններ, որոնք սովորական են Ներսիսեան դպրոցի համար, և դրա ինքն ըստ ինքեան պատիւ չեն բերի ոչ մի դպրոցական հիմնարկութեան։

Մենք միշտ մատնանիշ ենք արել հայոց այդ մեծ դպրոցի մէջ գոյութիւն ունեցող ինտրիգաների, անձնական կուսակցութիւնների և անվերջանալի խառնակութիւնների վրա, և ամեն բոպէ պատրաստ ենք հրապարակ հանելու ամեն տեսակ կամայականութիւնները՝ անկանոնութիւնները և վատութիւնները՝ լինեն դրանք տեսչի կողմից, լինեն դրանք հոգաբարձութեան այս կամ այն անդամի, թէ վարժապետների կողմից, առանց մի վայրկեան անգամ մտածելու այն մասին, թէ արդեօք այդ կամայականութիւնները և անկանոնութիւնները կատարող տեսուչը, հոգաբարձուն կամ վարժապետը ով է, կամ ինչ կուսակցութեան է պատկանում։

Իսկ Ներսիսեան դպրոցը, չը պէտք է մոռանալ, կուսակցական մրցումների կենտրոն է...,.

Պ. Արասխանեանի վարժապետութիւնից արձակելը այժմ մի ուրիշ խնդիր է յարուցանում, որի վրա և ուզում ենք ուշադրութիւն դարձնել։ «Արձագանքը» հաղորդում է, որ նա մի բողոք է ներկայացրել Կաթողիկոսին, Ներսիսեան դպրոցի տեսչի և հոգաբարձութեան դէմ, և խնդրում է հայոց Կաթողիկոսից, քննութիւն նշանակել այդ խնդրի առիթով։ Հաղորդելով այդ լուրը շաբաթաթերթը մի տեսակ ուրախութեամբ աւելացնում է, որ այդ բողոքը արժանացել է Կաթողիկոսի ուշադրութեան և յոյս ունի որ քննութիւնը կը մաքրէ Ներսիսեան դպրոցի մթնոլորտը և այլն։

Ամենքը, որոնք ծանօթ են գործին, անկասկած զարմանքով կարդացած կը լինեն այդ տողերը պ. Յովհաննիսեանի օրգանի էջերում։ Բայց զարմանալ պէտք չէ։ Այստեղ խնդիրը անձնական է, և չէ որ «Արձագանքի» ամենամեծ իդէալը «անձնական խնդիրներն» են։

Ցանկանալով իսկ պ. Արասխանեանի ուսուցիչ մնալուն Ներսիսեան դպրոցում,—ինչպէս առիթ ենք ունեցել ուրիշ անգամ ևս յայտնելու,—մենք շատ քիչ նշանակութիւն ենք տալիս այն բանին, թէ ինչ հետևանք կունենայ պարոնի բողոքը, քանի որ այդ բողոքը ամենից առաջ ուղղակի կերպով խախտում է ձայնատուութեան սկզբունքը, որի հիմքերը չը խախտելը մեզ համար ամենաառաջին նշանակութիւնն ունի։

Ի՞նչ ձայնատուութեան սկզբունք կայ այդտեղ,—կը հարցնեն մեզ գործին անտեղեակ անձինք։ Շատ պարզ է։ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, իբրև մի կոլլեգիական հիմնարկութիւն, որը ամեն տեսակ հարցեր վճռել է և վճռում է ձայների առաւելութեամբ, այս անգամ էլ ձայների առաւելութեամբ, վճռել է հեռացնել դպրոցի այս կամ այն վարժապետին։ Դա է ամենամեծ հիմքը, որի վրա հաստատված է մեր դպրոցական վարչութիւնների գործունէութիւնը, և կարծում ենք, որ կարիք չը կայ հասկացնելու, թէ ինչ համակրելի սկզբունք է ձայնատուութեան սկզբունքը, որը այս բոպէին և միշտ կը լինի ամենաարդար միջոցը՝ ամեն տեսակ հարցեր վճռելում։

Այդ տեսակ ընդհանուր և արդար սկզբունքները չը խախտելու համար շատ անգամ պէտք է զոհվեն նոյն իսկ արժանաւոր անձինք, և հէնց այդ պատճառով մենք չենք խօսի և երբէք էլ չենք խօսել այնպիսի վճիռների դէմ, որոնք կայացվում են ձայների առաւելութեամբ, մի այնպիսի հաստատութեան մէջ, ինչպիսին դպրոցական վարչութիւնն է։ Խախտել այդպիսի ընկրբունքները,—ոչ ցանկալի է և ոչ էլ ներելի, եթէ մինչև անգամ այդ բողոքի հիմքը լինեն կուսակցական հաշիւները, եթէ մինչև անգամ այդտեղ զոհվում են արժանաւոր անձինք։

Կարող է պատահել, որ մինչև անգամ պ. Արասխանեանի բողոքը ունենայ օգտաւէտ հետևանք պ. Արասխանեանի, կամ աւելի լաւ է ասել, նրա բողոքին համակրող կուսակցութեան համար,—որի ցանկութիւնները ամենքիս յայտնի են,—բայց դա էլ ամենափոքրիկ համակրութեանն անգամ արժանի չէ կարող լինել։

Ի՞նչու խախտել ձայնատուութեան սկզբունքը. ինչ բողոք կարող է լինել այդ վճռի դէմ, որ մի հոգաբարձութիւն կայացնում է ձայների առաւելութեամբ, և ինչպէս կարելի է համակրել ձայների մեծամասնութեամբ կայացած վճիռների քանդելուն։

Այո, մենք համաձայն ենք, որ Ներսիսեան դպրոցի վարչութիւնը շատ անգամ անհամակրելի գործեր է կատարում. մենք սրտով ցանկանում ենք, որ մաքրվի Ներսիսեան դպրոցի մթնոլորտը. մենք վաղուց ասել ենք, որ պէտք է վերջ տալ այդ դպրոցում կատարվող դեղծումներին, բայց, թող իմանան պ. Արասխանեանի միջոցով իրանց անձնական նեղ դիտումներին ձգտող մարդիկ, որ այդ բոլորին հասնելու ճանապարհը «ձայնատուութեան սկզբունքի» խախտելը չէ, և հէնց այդ տեսակ սկզբունքների խախտելը և անձնաւորութիւնների ետևից ընկնելն է որ այսօր առաջ է բերել մի այդպիսի անտանելի խաօս Ներսիսեան դպրոցում։

Եւ ամօթ է, որ այդ տեսակ բաներին ուղղակի թէ կողմնակի կերպով պաշտպանութիւն են ցոյց տալիս նոյն իսկ Ներսիսեան դպրոցի մի քանի հոգաբարձուները,—թէ մամուլի և թէ գաղտնի միջոցներով, այն հոգաբարձուները, որոնք այդ բոլորի մէջ միանգամայն ուրիշ նպատակ ունեն, և որոնք այնքան ճարպիկ են, որ կարողանում են հարկաւոր ժամանակը այս կամ այն միամիտներին իրանց ձեռքում գործիք դարձնել, իսկ հարկաւոր չեղած ժամանակը՝ այդ միամիտներին հալածել և դրանց վրա ծիծաղել.....

*

ՏԻԿԻՆ ՆԻԿԻՖՈՐՈՎԱՅԻ ԳՈՐԾԸ

—

Պաշտպանը, երդուեալ հաւատարմատար Զէմէսով, դիմելով դատաւորներին, ասում է. «Պարոններ դատաւորներ. մութ է ներկայ գործը, մութ էր նա մինչև դատաստանական քննութեան սկսվելը, նոյնքան մութ է մնացել նա և քննութիւնից յետոյ, նոյնքան մութ է նա և այժմ։ Միայն այսօր առաւօտեան, էկսպերտ, բժշկապետ Պավլովսկի, ջանք գործ դրեց բարձրացնել գործը ծածկող խորհրդաւոր վարագոյրը, բայց կատարելապէս բացանել վարագոյրը նրան չաջողվեց։» Խելքը, մտախորհութիւնը այդ գործում, պաշտպանի կարծիքով, պէտք է լրացնի գործի քննութեան համար պակասող ճիշդ տեղեկութիւնները։ Մէկ իրողութիւն անուրանալի է այդ գործում, որ բէվօլվերը գտնվեց Նիկիֆորովայի ձեռքում. այդ բանում պաշտպանը համաձայն է մեղադրական իշխանութեան հայեացքի հետ։ Այնուհետև մեղադրողի և պաշտպանի ճանապարհները միմեանցից հեռանում են։ Մեղադրական իշխանութիւնը պնդում է որ Պեկարսկու մահը հետևանք էր նախամտածված դիտաւորութեան, իսկ պաշտպանը այդ չէ կարող պնդել։ Առանց որ և է պատճառի ոչ մի մարդ նախամտածված դիտաւորութեամբ սպանութիւն չի գործի։ Իսկ զրգռված դրութեան մէջ կատարվող սպանութիւնների պատճառը ընդհանուր է,—դա վրէժխնդրութեան զգացմունքն է։ Պաշտպանը պնդում է որ Պեկարսկի և Նիկիֆորովա միմեանց սիրում էին խոր և վառ սիրով։ Պրոկուրօրն ասել է որ Նիկիֆորովայի սէրը եսական սէր էր, բայց աշխարհիս երեսին ամեն տեսակ սէր եսական է, բացի մայրական սի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Gegen Dummheit kämpfen
Götter selbst vergebens.

Ցիմարութեան դէմ աստուածներն անգամ զուր են մարտնչում։

—

Վիէննայի Մխիթարեանների ձեռքով հրատարակվող «Հանդէս Ամսօրեայի» ներկայ թիւ յուլիսի տետրակում կարդում ենք հետևեալ յօդուածը հայոց լեզուի տառադարձութեան խնդրի մասին, որի մէջ Մխիթարեան հայրերը բերել են իրանց կարծիքը հաստատելու համար և գերմանացի ուսումնական լեզուագէտ պրոֆէսսոր Հիւբշմանի վկայութիւնը։ Մեր սուրբ հայրերը այնպիսի մի ուսումնական մարդու, ինչպէս Հիւբշմանն է, վկայութիւնը բերելով, համոզված էին թէ յաղթութիւն են տարել, համոզված էին, որ ի հարկէ, ոչ ոք չի համարձակվի որ և է առարկութիւն անել Հիւբշմանի պէս մի հեղինակութեան դէմ։ Զուր տեղ են կարծում գերապատիւ հայրերը, որ մենք այն աստիճան ստրկական ոգի ունենք, որ անպայման կը խոնարհվենք հեղինակութեան առջև, թէկուզ կատարելապէս համոզված էլ լինէինք, որ հեղինակութիւն ունեցող ուսումնականը անհիմն, սխալ և վայր ի վերոյ կարծիք է յայտնում։

Բերում ենք այստեղ ամբողջութեամբ թէ Վիէննայի Մխիթարեանների ամսագրի խօսքերը և թէ պրոֆէսսոր Հիւբշմանի կարծիքը։

«Կարդացինք ու լսեցինք մինչև ցայժմ և հետզհետէ կը լսենք՝ տառադարձութեան մասին եղած ծանօթ պայքարն ու վէճը, որ ազգային դիտնականաց կողմանէ յուզուեցաւ. և իւրաքանչիւր ոք ըստ իւր տեսութեան դատելով՝ այս կամ այն կողմը տուաւ իւր վճիռն։ Բայց ցանկալի էր լսել նաև եւրոպացի գիտնականաց կարծիքն ալ, որոնք իբրև ուսուցիչ լեզուագիտութեան կրնային իրն աւելի լուսաւորել։ Այս պատճառաւ խնդրեցինք բրոֆէսսոր Հիւպշմանէն որ հաճի իւր կարծիքն յայտնել մեր «Հանդիսին» մէջ։ Խնդիրն պարզաբար իւր առջև դրինք, սկսեալ «Մշակի» առաջարկութիւնէն մինչև ցայսօր յուզուած պայքարին թեր ու դէմ գրութիւններն և ի վերջոյ ծանուցինք համառօտիւ նաև մեր՝ «Արևելքի» մէջ յայտնած պատճառներն. այսինքն թէ արևմտեան արտասանութիւնը սխալ համարել՝ գիտնական չէ, թէ լեզուագիտական օրինաց ենթարկեալ երևոյթ մըն է, թէ գրելու մէջ միութիւն բաւական է, և այլն։ Եւ ահա այսպէս կը գրէ բրոֆ. Հիւպշման իւր նամակին մէջ՝ տառադարձութեան խնդրոյ մասին։»

Բերում ենք այստեղ պրոֆէսսոր Հիւբշմանի երևելի կարծիքը, որը ինքնահաւանութեամբ տպելով իրանց ամսագրի մէջ Վիէննայի Մխիթարեան հայրերը, հայոց լեզուի այդ անողորմ աղաւաղողները, համոզված են թէ մեծ յաղթութիւն են տարել։ Ահա Հիւբշմանի կարծիքը։

«Ամենայն սիրով կը փութամ ինձի առաջարկուած խնդրոյն նկատմամբ կարծիքս յայտնել։ Իրը շատ պարզ է (շատ էլ պարզ չէ, պարոն պրոֆէսսոր) և ճիշդ այնպէս, ինչպէս դուք դատած էք։ Եթէ տփղիսեցիք (Մխիթարեանները այդտեղ խելք են բանեցրել և աւելացրել են ծանօթութեան մէջ՝ իմա ռուսահայք) հին արտասանութիւնը պահած են, այս իրենց ոչինչ գովութիւն է, ինչպէս նաև արևմտեան հայոց նախնական արտասանութիւնէն հեռացած ըլլալը պարսաւանք չէ։ Ամեն կենդանի լեզուներն յընթացս դարուց կը փոփոխուին, ոմանք աւելի, ոմանք նուազ. և այս փոփոխութեան մէջ է լեզուաց կեանքն. միայն մեռեալ լեզուներն (ինչպէս միջին դարու և նոր ժամանակիս լատիներէնն, իբրև գիտնոց լեզու, Gelehrtensprache) անփոփոխական են։ Լեզուաց այս փոփոխութիւնն խօսողի կամքէն բոլորովին անկախ է. առանց գիտակցութեան յընթացս դարուց սերնդէ սերունդ անցնելով կը կատարուի։ Բայց մէյ մոր այսպիսի փոփոխութիւն յառաջ գայ, այնուհետև մարդկային կամք մը կարող չէ դայն բառնալ, ինչպէս որ մարդկային կամք մը դայն յառաջ չէ բերած։ Ըստ այսմ ամենեին օգուտ չունենար եթէ արևմտեան հայք տփղիսեցւոց (էլի տփղիսեցիք!) պահանջմանցն հետևելով՝ հին արտաբերութեան դառնալու որոշումն ընեն. վասն զի,—անկարելի է։ Այո, կրնան թերևս քանի մը հոգի (?) Տփղիս բընակելով, տփղիսեցւոց արտաբերութիւնն առնուլ, սակայն ազգին մեծագոյն զանգուածը՝ «երկու միլիոն» արևմտեան հայք ասոնց պիտի չը հետևին, այլ ինչպէս իրենք սորված են՝ նոյնպէս պիտի աւանդեն իրենց զաւակաց։ Լեզուագիտական տեսակէտով Տփղիսի պահանջմունքը չեմ կրնար իրաւացի դատել։ Հնամեն (das Alterthümliche) արժէք ունի լեզուագէտներու՝ բայց ոչ երբէք խօսողներու համար։ Բայց գլխաւոր բանն այն է, որ տփղիսեցւոց պահանջմունքն անգործադրելի է և անոր համար արժէք չունի։ Արդի կենդանի հայ գաւառականները պէտք են խօսուիլ այնպէս, ինչպէս որ են։ Կրնայ ժամանակաւ գրաւոր լեզու մը (Schriftsprache) հնարելու խնդիրն ծագել, որով նախ և յառաջ գիտնականք գրաւոր կերպով իրարու հետ յարաբերութեան մէջ մտնեն և յընթացս ժամանակաց դպրոցի և եկեղեցւոյ ազդեցութեամբը ժողովրդեան ընդարձակագոյն կարդերուն մէջ մուծուի։ Սակայն ասոր համար աւելի նպաստաւոր պարագաներ կը պահանջուին, որոնցմէ առ այժմ հայք զուրկ են։»

—

Դրանով վերջանում է Հիւբշմանի կարծիքը հայոց աշխարհաբար լեզուի տառադարձութեան խնդրի մասին։

Քննենք այժմ ինչ է ասում յարգելի գիտնականը և որպէս զի լաւ ըմբռնենք նրա ասածը, բաժանենք նրա յօդուածը երեք գլխաւոր կէտերի վրա։

ռուց։ Նիկիֆորովա, պրոկուրորի ասելով, չռայլութեանը սովոր մի կին էր,—բայց մենք տեսնում ենք թէ նոյն կինը հրաժարվում է շահաւէտ և շքեղ դիրքից, հրաժարվում է 40,000 տարեկան եկամուտից և գնում է Մերվ իր սիրած մարդու ետեւից։ Այդ տեսակ վարմունք միթէ յատուկ է եսական բնաւորութեան տէր մի կնոջ։ Շախիրեվայի ցուցմունքներից էլ մենք տեղեկանում ենք որ մեղադրվածը իր ամբողջ ունեցածը ծախսում էր Պեկարսկու վրա և այդ վերջինը ապրում էր Պետերբուրգում Նիկիֆորովայի հաշուով, որը ոչ թէ միայն իր ունեցած նաղդ փողերն է տալիս Պեկարսկուն, բայց և իր իրեղէններն էլ գրաւ է դնում նրա համար։ Թիֆլիս գալով նա յանձնում Պեկարսկուն 3000 ռուբլի և մօտաւորապէս մի ամսից յետոյ այդ գումարից Պեկարսկու մօտ մընում է միայն կէսը։ Իսկ ինքն մեղադրվածը մի և նոյն ժամանակ ամենահամեստ կերպով էր ապրում։ Նիկիֆորովա այն աստիճան յափշտակված կերպով սիրում էր Պեկարսկուն, որ մի օր չէր կարող անցկացնել առանց նրան տեսնելու. եթէ մի օր նա ուշանում էր գալ, Նիկիֆորովա դժվածի պէս էր լինում։ Այնուհետև պաշտպանը բազմաթիւ ապացոյցներ է բերում որ Նիկիֆորովա անկեղծ և անձնուէր կերպով սիրում էր Պեկարսկուն. նա համ ինքն խանդոտ էր, համ էլ ուզում էր Պեկարսկու սրտի մէջ խանդոտութեան զգացմունքը վառ պահել, երբ կարծում էր թէ նրա զգացմունքները սառչում էին։ Բայց և ինքն Պեկարսկի իր նամակներում խոստովանվում է թէ շատ է սիրում Նիկիֆորովային, անուանում է այդ սէրը իր կեանքի «առաջին սէր», իսկ յայտնի է որ երիտասարդի առաջին սէրը որքան յանկարծակի է ծագում, այնքան էլ երկար է տևում միշտ։ Պեկարսկի օրինաւոր, ազնիւ մարդ էր և այդ պատճառով կարելի է հաստատ ասել թէ նա ճշմարիտ, խոր և անկեղծ կերպով սիրում էր Նիկիֆորովային, եթէ ոչ, եթէ նա կեղծաւոր կերպով սիրած լինէր, կարելի կը լինէր կասկածել նրա ազնուութեան մասին, որովհետև նա երկար ժամանակ ապրում էր իր սիրուհու հաշուով։ Զը սիրած կնոջ հաշուով ապրելը՝ մի տգեղ և դատապարտելի բան է, և միայն այնտեղ, որտեղ ճշմարիտ սէր կայ՝ մի և նոյն է թէ ով ում հաշուով կապրի։ Պաշտպանը հաւատացած է որ նա ճշմարիտ սիրում էր Նիկիֆորովային, որովհետև գիտէ թէ օրինաւոր, ազնիւ մարդ էր, եթէ ոչ այն մարդկանց, որոնք առանց ճշմարիտ սիրելու սիրուհու հաշուով են ապրում՝ հասարակութեան մէջ տալիս են մի այնպիսի անարգ անուն, որը պաշտպանը չէ ուզում արտասանել։ Պրոկուրորը ասել է թէ Պեկարսկի իր դիրքով, իր զարգացմամբ բարձր էր Նիկիֆորովայից, սակայն պաշտպանը ապացուցանում է որ երկուսն էլ մի շրջանի մարդիկ էին և մեղադրվածը իր կրթութեամբ, իր խելքով, իր ուսումով՝ Պեկարսկուց ստոր չէր։ Թէ որքան Նիկիֆորովա սիրում էր Պեկարսկուն՝ ապացոյց կարող է լինել այն իրողութիւնը, որ այդ կինը, որը սովոր էր թանգագին ընծաներ, ակնեղէններ, ադամանդներ ստանալու Դուխինովից, երեխայի պէս ուրախանում է և այդ մասին իր մօրը նամակ է գրում,—երբ Պեկարսկի ընծայում է նրան ոչինչ արժէք չունեցող մի մեղալիոն։ Իր մօր անունով գրած նամակներից երևում է որ Նիկիֆորովա անկարգ կեանքից յետոյ գտել էր Պեկարսկու սիրոյ մէջ հոգեկան անդորրութիւն, գտել էր փոթորկալի կեանքից յետոյ մի նաւահանգիստ։ Պեկարսկու մահից յետոյ գտնում են նրա հագուստի գրպանի մէջ Նիկիֆորովայի լուսանկար պատկերը, որը նա միշտ իր հետ էր ման ածում, որպէս սիրահարված պատանի։ Պրոկուրորը կարծում է որ Նիկիֆորովայի պէս ընկած կանայք սիրել չեն կարող, սակայն պաշտպանը յիշեցնում է երևելի դրողներից նկարագրված ընկած կանանց այնպիսի տիպեր, ինչպէս Վիկտոր Հիւգոյի՝ Մարիոն Դելլորմ, Ալէվոյի՝ Մանոն Լէսկո և այլն, որոնք անառակ կեանք վարելուց յետոյ յանկարծ սիրահարվում են խոր և անկեղծ սիրով, և այնուհետև կատարելապէս կերպարանափոխվում են բարոյապէս։ Եթէ Նիկիֆորովա սիրելով Պեկարսկուն մի քանի ժամանակ դեռ շարունակեց ապրել Դուխինովի հետ, մինչև այդ վերջինին կատարելապէս թողնելը,—դա էլ չէ ապացուցանում թէ այդ կինը անկեղծ կերպով չէր սիրում Պեկարսկուն։ Միթէ մենք չենք տեսնում օրինակներ մեր ընտիր հասարակութեանը պատկանող պսակված կանանց մէջ, որոնք թէև անկեղծ կերպով սիրում են իրանց սիրեկանին, բայց դիրքը և նիւթական միջոցները չը կորցնելու համար այնու ամենայնիւ շարունակում են ապրել իրանց ամուսինների հետ։ Այնուհետև պաշտպանը հիմնվելով բժշկապետ Պավլովսկու բժշկական բացատրութիւնների վրա, ապացուցանում է որ մեղադրվածը մի հիւանդոտ, հոգեկան անբնական դրութեան մէջ գտնված կին էր, դիւրագրգիռ, վառ և հիւանդոտ երևակայութեան տէր էակ էր և իր սիրած մարդու սպանութիւնն էլ նա կատարել է բոլշեական խիստ դրդռման, կատարեալ մոռացութեան, և մտաւոր կարողութեան կորուստի բոլշեում։ Նրա հիւանդոտ դրութիւնը, բացի բուն անհատական լինելուց, մի և նոյն ժամանակ և ժառանգական է. նրա հայրը, հօրեղբայրը և մայրը,—բոլորն էլ անբնական, հոգեպէս հիւանդ մարդիկ են։ Հերքել հոգեկան հիւանդութիւնների ժառանգական լինելը,—նշանակում է հերքել այն բոլոր հետեւանքները, որոնց մշակել է ճիշդ դիտութիւնը վերջին 25 տարվայ ընթացքում։ Բէվօլվերի առաջին հարուածը մեղադրվածը չէ յիշում, որովհետև անդիտակցաբար էր արձակել ատրճանակը, իսկ երկրորդ հարուածը, պաշտպանի կարծիքով, անկարելի է որ հացրած լինէր Պեկարսկուն ետևից, քանի որ առաջին վերքի և երկրորդի մէջ անցք կայ և դիակը հետազօտելու ժամանակ հնար եղաւ առաջին վերքից զօնդ անցկացնել երկրորդ վերքի մէջ։

Պաշտպանը վերջացնում է իր խօսքը կրկնելով, որ իր յանցանքը Նիկիֆորովա գործել է անդիտակցական, հիւանդոտ, ուրեմն անպատասխանատու դրութեան մէջ գտնվելով, իսկ մեղադրելու դատապարտել մի հիւանդին,—կը նշանակէր յանցանք գործել։ Պաշտպանը խնդրում է արդարացնել մեղադրվածին։

Նախագահը ընդմիջում է նիստը մինչև միւս օրվայ, սեպտեմբերի 5-ի, առաւօտեան ժամի 10-ը։

Հասարակութիւնը սկսում է ծափահարել պաշտպան Զէմէսովին։ Նախագահը զանգակ է տալիս և հրամայում է պրիստավին անմիջապէս հեռացնել ամբողջ հասարակութիւնը դահլիճից։

Միւս օրը, սեպտեմբերի 5-ին, նիստը բացվում է ուղիղ 10 ժամին առաւօտեան։

Պրոկուրորը կարճ կերպով կրկնում է իր երէկվայ ասածները, պաշտպանն էլ իր ասածները ամփոփելով, նորից առարկութիւններ է անում պրոկուրորի դէմ։

Դատարանի վճիռը արդէն յայտնի է մեր ընթերցողներին։ Այդ վճիռը տպված էր «Մշակի» № 101-ի ներքին լուրերի բաժնում։

Վճռի յայտնվելուց յետոյ պաշտպանը դիմեց դատարանին, խնդրելով որ մեղադրվածին ազատեն բանտից մի յայտնի անձի երաշխաւորութեամբ, կամ 10-ից մինչև 15 հազար ռուբլու գրաւականով, աւելացնելով որ այդ գումարի գրաւականը ինքն պատրաստ է այս բոպէիս ներկայացնել դատարանին։

Դատարանը, պրոկուրորի եղրակացութեան հիման վրա, մերժում է պաշտպանի խնդիրքը։

Պաշտպանը դժգոհ լինելով նահանգական դատարանի վճռից, խնդրում է դատարանը տալ իրան վճռի պատճէնը, գործը դատաստանական պալատն անցկացնելու համար։

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

Սեպտեմբերի 9-ին

Ամսիս 7-ին գիշերը քաղաքի շրջակաների սարերի վրա ձիւն եկաւ։ Եղանակին նայելով՝ կարելի է ասել, որ այս տարի ձմեռը ցուրտ կը լինի։

Տեղիս երկսեռ ուսումնարանների վերաքննութիւնները սկսվեցան օգոստոսի 25-ից, իսկ կիրակի, ամսիս 4-ին, ս. պատարագից յետոյ, օրհնեցին Կարապետ արքեպիսկոպոսի գերեզմանը, որտեղ ներկայ էին՝ հասարակութիւնը, ուսուցչական խումբը, աշակերտները և աշակերտուհիները։ Հոգեհանգստի վերջը ներկայ եղողները ուղեւորվեցան դէպի նորակառոյց Կարապետեան ուսումնարանը։ Ուսումնարանը օրհնելուց յետոյ, աւագ ուսուցիչ Խօջամիրեան մի ճառ խօսեց, բացատրելով Կարապետ արքեպիսկոպոսի ազգին մատուցած ծառայութիւնները, ցուցեց, որ նրա մի քանի դիտաւորութիւնները, վաղահաս մահուան պատճառով, չիրագործվեցան, աւելացնելով, որ այդ գործերը պէտք է շարունակի Ախալցխայի հասարակութիւնը, յարգելով նորա յիշատակը։ Նա բացատրեց կարճառօտ կերպով ուսումնարանի նշանակութիւնը և այն վնասները, որ նա կրում է, չնորհով հասարակութեան անտարբեր վերաբերվելուն դէպի դպրոցները և յոյս յայտնեց, որ այս տարվանից նոր ուսումնարանի հետ կը միանան և նոր յարաբերութիւններ, յարգանք և կարգապահութիւն հասարակութեան կողմից դէպի դպրոցը։ Դառնալով դէպի ուսուցիչները ճառախօսը յայտնեց, թէ այս տարի նա այդ խմբից աւելի գործունէութիւն և համերաշխութիւն է սպասում։ Սորանից յետոյ օրիորդաց դպրոցի աշակերտուհիները երգեցին, ապա հայր Ճերմակեան սկսեց խօսել, լրացնելով պ. Խօջամիրեանի ասածները և աւելացնելով, թէ դպրոցների առաջ չը գնալու պատճառը տեղիս ժողովուրդն է, որը վատ ընտանեկան կրթութիւն է տալիս իր զաւակներին։ Այդպիսով վերջացաւ այն օրվայ հանդէսը։

Այս տարի ուսուցչական խումբը մնաց անփոփոխ, չը նայած, որ հոգաբարձուները որոշել էին ահագին փոփոխութիւններ անելու։ Բարեբաղդաբար նրանց այդ դիտաւորութիւնը չաջողվեց, ուստի նրանք դիմեցին վերջին միջոցի՝ պակասեցրին ուսուցիչների ռոճիկները։ Բայց ուսուցիչների խմբի անդամները կապված լինելով միմեանց հետ սերտ յարաբերութիւնով և յարգելով աւագ ուսուցչի խնդիրը, որոշեցին այս տարի էլ մնալ Ախալցխայում։

***

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Սեպտեմբերի 9-ին Անդրկովկասեան երկաթուղու գծով ուղևորվեց դէպի Բագու, այնտեղից Էնզելի գնալու համար՝ գեներալ-լեյտենանտ Բէկլեմիշեվ։ Նա գնում է հանդիպելու և ապա ուղեկցելու դէպի Կովկաս պարսից շահի եղբօրը, որը Թիֆլիսում պէտք է լինի սեպտեմբերի 24-ին կամ 25-ին։

—

ՍԱԹԼԷԼԻՑ մեզ գրում են օգոստոսի վերջին օրերից հետևեալը։ «Այստեղ տների մեծ մասը փայտաշէն է և այդ պատճառով շատ վտանգաւոր է լինում տներում և նոյն իսկ տների կողքին կրակ վառել։ Մանաւանդ երբ քամի է լինում, չոր փայտերից շինած այդ տները, շատ հեշտութեամբ բռնավառվում են։ Հրդեհները այստեղ, մանաւանդ ամառ ժամանակ, անպակաս են։ Նորերումս այրվեց այստեղ մի տուն, որից և ոչ մի ասեղ չը փրկվեցաւ հրդեհի ժամանակ։ Տան տէրերը ամեն բան կորցնելով, փողոցի աղքատներ դարձան և հաց մուրալով պէտք է ապրեն այժմ։»

—

Ստացանք ՍՈՒՐԱՄԻՑ մի նամակ 23 պատուաւոր անձանց ստորագրութեամբ, որը մենք պարտաւորութիւն ենք համարում դետեղել «Մշակի»

Հիւբշմանի այդ յօդուածի մէջ կան իսկապէս երեք գլխաւոր թեզիսներ։

1) Մի որ և է ազգութեան փոքրամասնութիւնը լեզուի արտասանութեան վերաբերմամբ պէտք է ենթարկվի մեծամասնութեան արտասանութեան, ուրեմն «տփղիսեցիք» պէտք է խոնարհվեն «երկու միլիոն» արևմտեան հայերի արտասանութեան առջև։

2) Ամեն լեզուի մէջ կայ հնաձև և նորաձև արտասանութիւն։ Թիֆլիսի հայերը հայոց լեզուի հին արտասանութիւն են պահպանել, իսկ աշխարհիս մնացած հայերը առաջ են գնացել և հայոց լեզուի նոր արտասանութիւն են սեփականել։

3) Գուցէ կը գայ ժամանակ, երբ հայերի մէջ կը ծագի գրաւոր լեզու հնարելու խնդիրը, և այն ժամանակ գիտնականները իրար հետ յարաբերութեան մէջ մտնելով, կը մշակեն մի նոր լեզու և կը մտցնեն այդ իրանց նոր հնարած լեզուն ժողովրդի մէջ։

Ահա այդ երեք կէտերի մէջ է պարունակվում երևելի ուսումնական Հիւբշմանի ամբողջ յօդուածի խորին իմաստը։

—

Հիւբշման ընդունելով որպէս ակսիօմա, որ լեզուի արտասանութեան վերաբերմամբ մի ազգի փոքրամասնութիւնը պէտք է խոնարհվի նոյն ազգի մեծամասնութեան առջև, ինքն հաւատացած է և հաւատացնում է իր ընթերցողներին, որ ամբողջ երկրագնդի հայերից միայն Թիֆլիսեցիք են պահպանել հայոց հնաձև արտասանութիւնը, այսինքն մեր նախնիների պէս և հնդկրօպական ծագման բոլոր միւս ազգակից լեզուների նման Բ. B-ի պէս են արտասանում, Դ. D-ի պէս, Գ. G-ի պէս, Տ. T-ի պէս, Պ. P-ի պէս, Կ. K-ի պէս և այլն։ Իսկ մնացած մի քանի միլիոն հայերը նորաձև արտասանութիւն են ընդունել, այսինքն ընդհակառակն Բ. P-ի պէս են արտասանում, Դ. T-ի պէս, Գ. K-ի պէս, և այլն։

Ուրեմն բանը դրանումն է, որ արտասանութեան հարցը, պարլամենտական խնդիրների պէս պէտք է քուէարկութեան ենթարկել և վճռել՝ ձայների առաւելութեամբ։

Եթէ այդպէս էլ լինէր, եթէ հնարաւոր էլ լինէր ձայների մեծամասնութեամբ վճռել լեզուի արտասանութեան հարցը, այնու ամենայնիւ ինքըն ըստ ինքեան փաստը, իրողութիւնը՝ որ «Թիֆլիսեցիք» իրանց արտասանութեամբ փոքրամասնութիւն են կազմում հայերի ամբողջ թուի մէջ՝ ճիշդ չէ, կատարելապէս հակառակ է ճշմարտութեան։

Պ. Հիւբշմանին երևի յայտնի է այն ճշմարտութիւնը, որ ոչ մի մարդ, մանաւանդ մի ուսումնական, երբէք չը պէտք է խօսի այն բաների վրա, որոնց մասին ոչինչ տեղեկութիւն չունի։ Եթէ ոչ, այդ տեսակ վարմունք անուանվում է՝ յանդգնութիւն, որը, արժանի չէ ուսումնական մարդու կողմից։ Իսկ եթէ յանդգնութիւն չէ՝ կարող է լինել և վերջին ծայր միամտութիւն....

Պարզենք մեր ասածը։ Վիէննայի Մխիթարեանները, ուզենալով այսպէս թէ այնպէս լեզուի տառադարձութեան խնդրի մասին իրանց դատը տանել, գրել են Հիւբշմանին մի նամակ և հաւատացրել են նրան, որ «Մշակի» պէս հայոց տառերն արտասանողը միմիայն Թիֆլիսեցի հայն է, ուրիշ ոչ ոք։ Իսկ մնացած միլիոնաւոր հայերը՝ հայերէն ճիշդ այնպէս են արտասանում, ինչպէս Վիէննայի Mechitharistengasse փողոցում ապրող տասնեակ կաթոլիկ աբեղաները։ Միամիտ գերմանացին, որը իր ամբողջ կեանքը կաբինետում նստած՝ այլ և այլ լեզուների բառերի արմատները միմեանց հետ համեմատելով էր զբաղված, և ամենևին տեղեկութիւն չունէր հայերի, հայոց կեանքի, հայոց ներկայի, հայերի թուի, հայոց այժմեան գրականութեան, հայերի այժմեան մտաւոր շարժման ու հայոց այժմեան աշխարհաբար լեզուի մասին,—միամտաբար հաւատացել է Մխիթարեաններին, որպէս թէ Թիֆլիսից դուրս՝ մեզ պէս ոչ մի հայ չէ արտասանում հայոց տառերը։

Ուրեմն Մխիթարեան սուրբ հայրերի այդ տեսակ վարմունքին ուրիշ ինչ անուն տանք, եթէ ոչ՝ խաբեբայութիւն։

Ընդունել որ Վիէննայի Մխիթարեանները այն աստիճան տգէտ են, որ հաւատացած են թէ միմիայն Թիֆլիսի կամ Թէկուզ միմիայն Ռուսաստանի հայերը բ. b-ի պէս, պ. p-ի պէս, գ. g-ի պէս և այլն են արտասանում,—այդ անհնարին է։ Աւելի հաւանական է ընդունել, որ գերմանացին, ինչքան էլ ուսումնական լեզուագէտ լինէր նա, կատարելապէս տգէտ է հայոց ժամանակակից կեանքի վերաբերմամբ։ Ուրեմն եթէ չընդունենք Մխիթարեանների կողմից տգիտութիւն, ինչպէս բացատրենք այն իրողութիւնը որ նրանք աշխատեցին սխալեցնել ուսումնական Հիւբշմանին, ամենասխալ տեղեկութիւններ տալով նրան ժամանակակից հայերի մասին.... Այդ իրողութիւնը կարող ենք միմիայն նրանով բացատրել, որ դերապատիւ սուրբ հայրերը, հաւատարիմ մնալով այն եղուիտական սկզբունքին թէ՝ նպատակը արդարացնում է միջոցները,—իրանց լեղուագիտական դատը կորած տեսնելով, և իրանց աղաւաղած ու անճոռնի հայոց արտասանութիւնը գերմանացի ուսումնականի առջև արդարացնելու համար՝ նամակ գրելով նրան, որպէս զի նրա կարծիքն իմանան,—մի և նոյն ժամանակ գործ են դնում հետևեալ կոպիտ խաբեբայութիւնը՝ բացատրում են նրան թէ միլիոնաւոր հայերը արտասանում են հայոց տառերը ճիշդ այնպէս, ինչպէս իրանք են արտասանում, իսկ միայն «Թիֆլիս քաղաքի» հայերը և «Մշակը» ուրիշ կերպ են արտասանում։

Թէ այդ տեսակ վարմունք որ աստիճան կոպիտ, անտաշ, ասիական և աբեղայական խաբեբայութիւն է,—այդ կը պարզենք անմիջապէս։ Եւ ապա կանցնենք Հիւբշմանի յօդուածի մեր վերև յիշած երեք գլխաւոր կէտերի քննութեանը։

(Կը շարունակվի)

էջերում։ Ահա յիշեալ նամակի բովանդակութիւնը։ «Սուրամի հայ հասարակութիւնը, կարդալով ձեր լրագրի № 99-ի ներքին լուրերի բաժնում տպված մի գրութիւն մեր ծխատէր Յովսէփ աւագ քահանայ Առիւծեանցի վերաբերմամբ, մեր պարտաւորութիւնն ենք համարում հրապարակապէս յայտնել, որ լրատուի հաղորդածը սուտ է։ Մենք երբէք բարձր հոգևոր իշխանութեանը բողոքած չենք տէր Յովսէփի դէմ և երբէք այդ տեսակ դիտաւորութիւն էլ ունեցած չենք, քանի որ Սուրամում Յովսէփ աւագ քահանայի երեսուն տարվայ գործունէութեան ընթացքում մենք, սուրամցիքս, միշտ գոհ ենք եղել նրանից, միշտ երախտագիտութեամբ ենք վերաբերվել դէպի նրա երեսուն տարվայ օգտաւէտ և արդիւնաւոր քահանայական գործունէութիւնը։ Ի հարկէ ամեն մարդ թշնամիներ ունի, ուրեմն և հայր Յովսէփն էլ, ինչպէս ամեն մի մահկանացու, անշուշտ թշնամիներ ունի Սուրամում, բայց մեր հասարակութեան մեծամասնութիւնը յարգում և սիրում է նրան և միշտ պատրաստ է ամեն կերպ աջակցել տէր հօր ամեն մի սկսած ձեռնարկութեան, նրա ամեն մի գործին։ Մենք միշտ գործով ենք ցոյց տուել և դարձեալ ցոյց կը տանք մեր անկեղծ սէրը դէպի մեր արժանաւոր հովիւը։»

—

Ստացանք ԳՕՐԻՍԻՑ պ. Մանուչար Մէլիք-Ստեփանեանցից 3 բուրլի։ Այդ գումարի կէսը պարոնը նուիրում է Թաֆֆիի մահարձանի կառուցմանը, իսկ միւս կէսը հանդուցեալի չարագրութիւնների տպագրութեան գործին։

—

Ցիշեցնում ենք «Մշակի» բաժանորդներին, որ ժամանակ է արդէն ուղարկել խմբագրութեանը իրանց վրա մնացած ապառիկները։

—

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ շուտով գալու է Թիֆլիս, կոնցէրտներ տալու համար, երգչուհի տիկին Ալիս Բարբի։ Շնորհալի երգչուհին արդէն ծանօթ է Թիֆլիսեցիներին. քանի մի տարի առաջ նա մեզ մօտ կոնցէրտներ էր տուել յայտնի պիանիստ Զէզիի հետ։ Այժմ տիկին Բարբի տալու է իր կոնցէրտները Ֆէլդաու պիանիստի հետ։

—

Տեղական ռուս «Тифл. Листокъ» լրագիրը հաղորդում է հետևեալը։ «Լուր կայ, որ պ. Ա. Պետրոսեան խնդիրք է ներկայացրել տպագրական գլխաւոր վարչութեան՝ Թիֆլիսում «Զանգակ» անունով մի հայերէն ամսագիր հրատարակելու համար»։ Թէ ում է պ. Ա. Պետրոսեան, և թէ որքան ճիշդ է ընդհանրապէս այդ լուրը,—որի նմանները վերջին ժամանակներս յաճախ են երևում տեղական լրագիրներում, և միշտ առանց հետևանքի են մնում,—այդ մասին մեզ ոչինչ յայտնի չէ։

—

«Արձագանք» շաբաթաթերթը, որը վերջին ժամանակներս յատկապէս Քամոյենց եկեղեցու հարցը յարուցեց, արշաւանք է սկսել Ներսիսեան դպրոցի տեսուչ Բէգնազարեանց քահանայի դէմ, և այդ էլ իր յատուկ սովորութեամբ՝ շատ «ծուռումուռ» ճանապարհներով, և ոչ թէ բացարձակ և ազնիւ կերպով։ Նա իր վերջին համարում տպել է հետևեալը. «Երևանից մեզ գրում են. Թեմական դպրոցի հոգաբարձութիւնը զբաղված է տեսչի ընտրութեան խնդրով. հաստատ աղբիւրից տեղեկանում ենք, որ մտադրութիւն կայ հրաւիրելու Ներսիսեան դպրանոցի տեսուչ Սարգիս քահանայ Բէգնազարեանցին, միայն թէ կասկածում են, որ մի գուցէ քաղաքիդ դպրանոցի հոգաբարձութիւնը չը կամենայ զբաղվել այդպիսի առաջնակարգ անձնաւորութիւնից»։ Տպելով այդ տողերը (որոնք նոյնքան էլ կարող են Երևանից գրված լինել, որքան և Թիֆլիսից) շաբաթաթերթի խմբագրութիւնը իր կողմից աւելացնում է. «Զարմանալի կասկածոտ մարդիկ են եղած պ.պ. երևանցիները»։ Զարմանալի մարդ էք և դուք, կասենք մենք «Արձագանքի» խմբագրին։ «Ասացէք, ի սէր Աստուծոյ, ինչ գործ ունի այդտեղ Երևանը և Երևանի հոգաբարձութիւնը, և ինչ է այդ տեսակ ակնարկութիւնների և ինտրիգների նպատակը,—հեռացնել Բէգնազարեանին Ներսիսեան դպրոցից։ Ուրեմն ինչու չէք յայտնում բացարձակաբար. ինչու հրապարակով չէք ցոյց տալիս, որ նա անարժան է և վնասակար, և ինչու չէք խոստովանում, որ դուք ինքներդ, պ. Յովհաննիսեան և ընկ., աշխատելով սորանից երկու տարի առաջ՝ որ Բէգնազարեան ուսուցիչ և տեսուչ ընտրվի,—սխալվել էք և ձեր սխալով վնասել էք դպրոցին, որովհետև տուել էք նրան մի այնպիսի տեսուչ, որը, ձեր կարծիքով, այնքան վատ է և այնքան զբաղված է իր «տեղը պնդացնելու» հարցով, որ ժամանակ չունի հաշվելու թէ 18+17=35։ (Տես «Արձագանք № 85)։ Դուք ուզում էք հաւատացնել, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը չատ է ուզում հեռացնել Բէգնազարեանցին։ Շատ լաւ. ուրեմն ինչու հոգաբարձութիւնը մի անգամ արդէն մերժեց նրա հրաժարականը, ինչու հոգաբարձութիւնը չէ հրաժարեցնում տեսչին։ Այս քանի օրերս էլ նորից տեսչի հրաժարականը հոգաբարձական նիստի նիւթ պէտք է լինի, և անկասկած նոյն հոգաբարձութիւնը ձայների առաւելութեամբ կը մերժի Բէգնազարեանի հրաժարականը, եթէ մի արտաքին արգելք չը պատահի։ Դուք ուզում էք հաւատացնել Ներսիսեան դպրոցի մի քանի չէզոք հոգաբարձուներին, որ Երևանի թեմական դպրոցը մտադիր է նորից Բէգնազարեանին հրաւիրել։ Մենք հաստատ գիտենք, որ Երևանի դպրոցի հոգաբարձութիւնը այդպիսի միտք երբէք չէ ունեցել, և այդ պատճառով ծիծաղելի է, որ դուք այդքան «ծուռումուռ» ճանապարհների էք դիմում ձեր անձնական կուսակցական նպատակին հասնելու համար։ Եթէ Բէգնազարեան վատ և վնասակար է դպրոցի համար,—ցոյց տուեցէք հրապարակով, փաստեր բերէք, և այն ժամանակ ամբողջ հոգաբարձութիւնը կը համոզվի և կը հեռացնի այդ մարդուն տեսչի պաշտօնից։ Իսկ եթէ փաստեր չունէք, եթէ ձեր ամբողջ հիմքը անձնական է, և եթէ Բէգնազարեան վատ է դարձել միմիայն Քամոյենց եկեղեցու երեցփոխի հարցը յարուցվելուց յետոյ,—այդ դէպքում ձեզ մնում է միայն լռել։

—

Ատարխանի նախկին թեմական առաջնորդ Սոքիաս եպիսկոպոս Պարղեան՝ այժմեան կաթողիկոսի օրով նշանակված է Էջմիածնի Սինոդի անդամ, և մի և նոյն ժամանակ կատարում էր Երևանի թեմի փոխանորդ-առաջնորդի պաշտօնը։ Այժմ, ինչպէս տեղեկանում ենք, Սոքիաս եպիսկոպոսը պիտի թողնի Երևանի առաջնորդի պաշտօնը և բնակվելով Էջմիածնում, պիտի կատարի միմիայն Սինոդի անդամի պաշտօնը։ Իսկ թէ ով կը նշանակվի Երևանի առաջնորդ,—այդ մասին դեռ ոչինչ յայտնի չէ։

—

Սեպտեմբերի 3-ին Մոսկվայում հրատարակվող «Русскія Вѣдомости» լրագիրը տօնեց իր գոյութեան քսանհինգամեակը։ Այդ առիթով լրագրի խմբագրութիւնը խօսելով իր օրգանի անցեալի մասին, համառօտակի կերպով պարզում է այն ուղղութիւնը՝ որին հետևել է, և որը ընդհանրապէս արժանի է համակրութեան, քանի որ հիմնված է լայն և արդար սկզբունքների վրա։ Ցանկանում ենք աւելի լաւ ապագայ և աւելի աջողութիւն ռուս առաջադիմականների օրգանին, որպէս զի կարող լինի աւելի օգտաւէտ կերպով ծառայել իր ստանձնած համակրելի գործին։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստր Դէլիանով ներկայումս ճանապարհորդում է Ռուսաստանում՝ դպրոցական հիմնարկութիւններն այցելելու համար։ Իր այցելութիւնը մինիստրը սկսեց Կազանից, ուր նա եկաւ օգոստոսի 28-ին։

—

Բէալական դպրոցներում կատարվող փոփոխութիւնների հիման վրա, մաթեմատիկական գիտութիւնների դասաւանդութիւնը բաւական սահմանափակված է, և նրա փոխարէն նշանաւոր տեղ է տրված նոր լեզուների՝ այն է գերմաներէնի և ֆրանսերէնի դասաւանդութեանը։

—

Տեղական ռուս լրագիրները վերջին ժամանակները սկսել են «բռնել» «Кавказъ» լրագրի մի շարք բաւական ծիծաղելի և մի և նոյն ժամանակ աննեղելի սխալները։ Պաշտօնական օրգանի այդ տեսակ սխալները, ինչպէս պարզ կերպով երևում է, առաջ են գալիս նրանից, որ այդ լրագրի աշխատակիցները Թիֆլիսում նստած՝ զանազան լուրեր և թղթակցութիւններ են գրում ոչ թէ միայն Կովկասի, այլ ամբողջ Ռուսաստանի, և նոյն իսկ Պարսկաստանի զանազան քաղաքներից։ Լրագրական այսպիսի աշխատութիւնը, ի հարկէ, շատ սխալների աղբիւր կարող է դառնալ։

—

Պետերբուրգի հոգևոր ճեմարանի բէկտորը սեպտեմբերի 3-ին կարդաց այդ ճեմարանի ուսանողների առաջ Սինոդի ուկազը, որը վերաբերում է ուսանողների ներքին կենցաղավարութեանը։ Այդ ուկազի համաձայն, ինչպէս հաղորդում է «Русск. Вѣд.», ուսանողները զրկվում են ճեմարանից ինքնակամ կերպով դուրս գնալու իրաւունքից, որով նրանք օգտվում էին առաջ։ Ցանը չը գիշերած ուսանողը, այլ և նրանք, որոնք իրանց թոյլ կը տան որ և է անպատկառ բան ասել տեսչին կամ գործածել թունդ խմիչքներ, կարձակվեն ճեմարանից։ Ուսանողական ընթերցարանները փակվում են։ Այն ուսանողներին, որոնք վերև յիշած պահանջները խիստ կը դանեն, առաջարկված է թողնել ճեմարանը և հեռանալ։

—

Լօնդօնի «Ստանդարտ» լրագիրը հաղորդում է, որ Օդէսայում կազմվել է մի ռուս-ֆրանսիական ընկերութիւն, որը ուզում է միացնել Սև և Կասպից ծովերը ջրանցքով։ Ջրանցքն անցկացնելու ծախսը կը լինի 40,000,000 ր.։ Թէ ինչ աղբիւրներից է ստացել Լօնդօնի լրագիրը այդ լուրը,—չը գիտենք, և մենք դժուարանում ենք հաւատալ լրագրի հաղորդած այս լուրին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«STANDART» ԼՐԱԳՐԻ Կ. ՊՕԼՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ

—

Հռոմի պապի կոնդակի առիթով «Standart» լրագրի Պոլսի թղթակիցը օգոստոսի 27-ից հեռագրում է հետևեալ ինքն ըստ ինքեան անհիմն տեղեկութիւնները, որ առաջ ենք բերում ընթերցող հասարակութեան գիտութեան համար։ Ահա հեռագրի բովանդակութիւնը մի քանի կէտերի բացառութեամբ։

«Պապին կոնդակն առ Հայս, որով դանոնք կը հրաւիրէր միանալ Հռոմայ Եկեղեցւոյն հետ, մեծ յուզում յարոյց այդ ժողովրդեան մէջ։ Կերևի թէ շատ յարմար ժամուն եկած է՝ կրօնափոխական կարևոր արդիւնքներ ձեռք բերելու համար։ Երուսալէմի Հայերու հետ խօսակցելով կը տեսնեմ թէ նոքա կը զգան որ Էջմիածնի Հայ Կաթողիկոսն ևս թուլացած է իր Թուրքիոյ հօտին հետ յարաբերութիւններ ունենալու գործին մէջ։ Պաշտպանութիւն վայելելու համար ուսեալ և խոհուն հայերէ բաղկացեալ կուսակցութիւն մը կը մտածէ թէ օգտակար չէ՞ կաթոլիկ կամ բողոքական եկեղեցւոյն յարիլ։ Հայ կաթոլիկաց գործունեայ Պատրիարքն, որ՝ ինչպէս արդէն հեռագրեցի՝ կասկած կայ թէ կուզէ օգուտ քաղել հայ հպատակաց նկատմամբ Բ. Դրան ընթացքէն և կրօնափոխական շարժում յառաջ բերել, իմանալով այս ձգտում, ծանոյց Վատիկանի թէ պատեհ ժամն եկած է Պապին՝ հայ ժողովուրդն Հռոմայ եկեղեցին հրաւիրելու, իւր քաղաքական վիճակին բարւոքման յոյս տալով, սա տեսութեամբ թէ կաթոլիկ Տէրութիւնք յայնժամ հոգածու պիտի լինին նորադարձ հայ կաթոլիկներու վիճակին։ Արդ կը լսեմ թէ բարեկիրթ հայոց մեծամասնութիւնը բողոքական կրօնն ընդունելու կողմն է, իսկ հայոց տգէտ մասը կը յարի Հռոմայ։ Հետևապէս, թէ բողոքական և թէ պապական եկեղեցիք հաւանօրէն շատ մը հայ կրօնափոխներ պիտի ընդունին ի մօտոյ։ Զարմանալին այն է, որ իշխանութեան կողմէ հայք կը քաջալերուին կաթոլիկութիւն ընդունելու. զարմանալի է այս, քանի որ կրօնափոխութեան նպատակն այն օտար մինչամտութիւնն հրաւիրել է, զոր ցարդ ամեն առթիւ խստիւ մերժած է օսմ. դիւանագիտութիւնը։ Բայց հայոց մէջ տիրող կրօնափոխական շարժումը մօտէն դիտող մը կը տեսնէ թէ վերջերս Օսմ. Կայս. կառավարութեան բռնած ի մասնագոյն ընթացքին շնորհիւ հայք առաջուանէ լաւագոյն վիճակ մը ունին, բան մը, զոր իրենք ալ սիրայօժար կը խոստովանին։ Բայց կերևի թէ տակաւին խնդիրներ ունին, ապա թէ ոչ կրօնափոխութեան չէին դիմեր անշուշտ։

ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ԿՈՆԴԱԿԻ ՀԱՐՑԸ

—

Հռոմի պապի վերջին ժամանակներս հրատարակած կոնդակը,—որը իսկապէս մի առանձին նշանակութիւն և կարևորութիւն չունի,—ինչպէս երևում է շարունակում է յուզել Պոլսի հայերի մտքերը։ Մանրամասնութիւնները յայտնի են մեր լրագրի մէջ տպած Պոլսի թղթակցութիւններից։ Առաջ ենք բերում թիւրքահայերի կենտրոնական վարչութեան Կրօնական Ժողովի պաշտօնական յայտարարութիւնը, որը հրատարակված է սեպտեմբերի 1-ին։ Ահա այդ պաշտօնական յայտարարութիւնը։

«Եւրոպական լրագրաց ոմանց մէջ այս օրերս լուրեր կը հրատարակուին, որպէս թէ՝ Թուրքիոյ Հայոց մէջ ձգտումներ եղած ըլլան թողլու Հայաստանեայց Առաքելական ուղղափառ Սուրբ Եկեղեցին, և յարելու պապական կամ բողոքական Եկեղեցեաց։

Հայոց Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովն պարտ կը համարի ի պաշտօնէ յայտարարել թէ՝ այս լուրերն հիմնովին անտեղի են, թէ Հայոց Ազգին մէջ բնաւ երբէք այսպիսի խորհուրդներ և ձգտումներ գոյութիւն չեն առած, թէ Ազգն ի սկզբանէ անտի սերտ սիրով յարեալ կը մնայ իւր ամենասիրելի մօր, Հայաստանեայց Առաքելական ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյն, և ոչինչ կարող է բաժնել զինքն անոր ծոցէն, ուր ապրած է ցարդ, անկախ որ և է եկեղեցիէ և եկեղեցապետութենէ, և պիտի ապրի յաւիտեան, հաւատարիմ մնալով միշտ իւր նախահարց կրօնին և երախտապարտ առ մեծազօր Պետութիւնն Օսմանեան, որ ամեն դիւրութիւն չնորհած է իւր հպատակաց, աղատօրէն պաշտելու համար իրենց կրօնն։

Ստորագրած է՝ պատրիարքական տեղապահ՝ Սիմէօն արքեպիսկոպոս Սէֆէրեան. հայոց պատրիարքարան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ինչպէս հաղորդում է «Patrie» լրագիրը, ֆրանսիական մինիստրների վերջին նիստում հարց է ծագել համաշխարհային ցուցահանդէսը, որը պէտք է կայանար 1889 թ. յետաձգել մինչև 1890 թ.ականը։ Այդ հարցը յարուցել է մինիստր Գոբլէ։ Ենթադրում են, որ այդպիսի առաջարկութեան պատճառները զուտ քաղաքական են։

—Վիէննայում հարց է յարուցվել, մարդու չը գնացած և այրի կանանց ճանապարհութեան իրաւունք տալու լանդգաղի մէջ։

—«Corresp. de l'Est» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից հետևեալը. «Պապի կոնդակը, որ առաջարկում է լուսաւորչական հայերին միանալ կաթոլիկ հայերի հետ, մեծ դժգոհութիւն է յարուցել լուսաւորչականների մէջ. լուսաւորչականների սինոդը (կրօնական ժողովը) պատասխանեց այդ կոնդակին մի պաշտօնական գրութեամբ, որով մերժում է պապի առաջարկը։ Պապի կոնդակը մի քանի տեղ այրվեցաւ լուսաւորչականների ձեռքով»։

—Աւստրիական լրագիրների մեծ մասը դժգոհութեամբ և շատ խիստ լեզուով են խօսում Նատալիա թագուհու այն գրութեան վրա, որով նա դիմել է կօսիստորիային, և որը արդէն լոյս տեսաւ եւրոպական մամուլի մէջ։

—Միացեալ-Նահանգների հանրապետութեան նախագահի միւս կանդիդատը, գեներալ Հարրիսոն ևս հրատարակեց մի հաղորդագրութիւն, որով իսկապէս աշխատում է հերքել ռամկապետական կուսակցութեան կանդիդատ Կլեվելենդի մտքերը, որը նա լոյս հանեց մի առանձին հաղորդագրութեամբ։ Կլեվելենդի այդ հաղորդագրութեան բովանդակութիւնը արդէն ծանօթ է ընթերցողներին մեր լրագրի անցեալ համարից։

—Սերբիայից հեռագրում են, որ այնտեղ ուղերձներ են պատրաստվում բազմաթիւ ստորագրութիւններով, որոնցով ուզում են դիմել Միլան թագաւորին՝ խնդրելու որ նա հաշտվի թագուհու հետ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՍՕՖԻԱ, 10 սեպտեմբերի։ Այն մշտական ցոյցերի համար, որ անում է Ստամբուլովի օրգան՝ «Ազատութիւն» լրագիրը Բ. Դրան դէմ, սպառնալով ապստամբութիւն յարուցանել Մակէդոնիայում, Բ. Դուռը առաջարկեց բոլգարական կառավարութեանը վերջ տալ այդ բանին, բայց բոլգարները մատնանիշ արեցին մամուլի ազատութեան վրա և յայտնեցին, որ ինքը Թիւրքիան կարող է վերջ տալ այդ ցոյցերին՝ մտցնելով

Մակէդոնիայում այն ըէֆօրմները, որը նախագծել է Բերլինի դաշնագիրը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 սեպտեմբերի: Այսօր Պետերբուրգ վերադարձաւ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչ անդրանիկը:

ՍԱՄԱՐԱ, 10 սեպտեմբերի: Սամարեան-Ուֆիմի երկաթուղու բացմանը ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը ասեց, որ ինքը իր բոլոր ջանքերը կը դարձնի այն բանի վրա, որ այժմ բացվող ճանապարհը հասցնվի մինչև Իրկուտսկ՝ Օմսկի, Տօմսկի և Կրասնօեարսկի վրայով: Երէկ Սամարայից և Ուֆայից դուրս գնացին առաջին մարդակիր գնացքները:

ՏԱՇԿԵՆՏ, 10 սեպտեմբերի: Խխակ-խանը այժմ գտնվում է Մաղար-Շէրիֆում. նրա որդին զօրքի հետ միասին դանդաղ կերպով մօտենում է Կաբուլին: Էմիր Աբդուրահման-խանը կենդանի է և գտնվում է Կաբուլում. նրա որդին զօրքով ապստամբների առաջը դուրս եկաւ. երկու կողմերը էլ միմեանցից չատ հեռու չեն գտնվում: Ընդհարում դեռ ևս տեղի չէ ունեցել:

ՎԻԷՆՆԱ, 10 սեպտեմբերի: Իշխանուհի Կլեմենտինա Կօբուրգեան այսօր ուղևորվեց Սոֆիա:

ՍԻՄԼԱ, 11 սեպտեմբերի: Հնդկաստանի կառավարութիւնը լուր է ստացել աւգանական էմիր Աբդուրահման-խանից այն մասին, որ սեպտեմբերի 12-ին էմիրի զօրքը հասաւ Ֆին, որը գտնվում է Գաիբակից 30 մղոն հեռաւորութեան վրա, և որ Գաիբակի աւագները հնազանդութիւն ցոյց տուեցին: Խխակ-խանը, ինչպէս ասում են, փախաւ դէպի Բուխարա: Այդ լուրի ճիշդ լինելու մասին այնու ամենայնիւ Սիմլայում կասկածում են:—Զիտլարից հաղորդում են, որ Խխակ-խանը ուղևորվեց Բադաշան, որպէս զի ապստամբեցնի աղդաբնակութիւնը էմիրի դէմ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 սեպտեմբերի: Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը, սեպտեմբերի 8-ին Սամարա-Ուֆիմեան երկաթուղու բացման առիթով Թագաւոր Կայսրին իր ուղարկած ամենահպատակ ծանուցման բաղդ ունեցաւ հետևեալ հեռագիրը ստանալ Նորին Կայսերական Մեծութիւնից: «Ի սրտէ ուրախանում եմ Սամարա-Ուֆիմեան երկաթուղու բացման համար, մանաւանդ այն պատճառով, որ բացառապէս ռուսական նիւթեր են գործածվել դրա կառուցման վրա. շնորհակալութիւն ձեզ և այն բոլոր գործողներին, որոնք աշխատել են այդ գործում: Խընդրում եմ նոյնպէս Սամարա, Ուֆա և Բուգուրուսլան քաղաքների բնակիչներին յայտնել իմ շնորհակալութիւնս նրանց արտայայտած զգացմունքների և բարի ցանկութիւնների համար ինձ և իմ ընտանիքին»:—Երէկ երեկոյեան պետական կալուածների մինիստրը Մոսկվայով ճանապարհ ընկաւ դէպի Կրիմ:

ԲԵՐԼԻՆ, 12 սեպտեմբերի: Այստեղ մի քանի օրով հիւր եկած յունական թագաւորը երէկ երեկոյեան Վիէննայով ուղևորվեց դէպի Յունաստան:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Սեպտեմբերի 9-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. .	93 ր.	50	›
Համբուրգի վրա 100 մարկ — . .	46 ›	—	›
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 ›	85	›
Ոսկի — արժէ — . .	7 ›	71	›
Մաքսային կուպօններ — . .	151 ›	25	›
Արծաթ — — — . . .	1 ›	19	›
Բօրսային դիսկօնտներ — . .	7 և	8%	›
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	98 ›	50	›
— — — — 2-րդ —	96 ›	—	›
— — — — 3-րդ —	95 ›	—	›
— — — — 4-րդ —	95 ›	50	›
— — — — 5-րդ —	95 ›	—	›
— — — — 6-րդ —	— ›	—	›
Նոր 4% փոխառութիւն.	80 ›	50	›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	95 ›	—	›
— — 2-րդ —	95 ›	12	›
— — 3-րդ —	94 ›	87	›
Ներքին 5% առաջին փոխառութ.	260 ›	50	›
— երկրորդ —	236 ›	—	›
5½% բէնտա	100 ›	75	›
Ոսկեայ բէնտա.	169 ›	75	›
Եօթերորդ կօնսօլիդած փոխառութիւն.	144 ›	—	›
Նոր երկաթուղային բէնտա . . .	95 ›	25	›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ.	144 ›	—	›
— — թղթադ. .	90 ›	75	›
Գրաւ. թղ. Ազն. բանկի . . .	96 ›	50	›
5½% գրաւական թղթեր խերսօնի կալուած բանկի.	97 ›	50	›
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	101 ›	75	›
— — Պոլտավայի— —	100 ›	50	›
— —Պետ.Տուլակ.— —	100 ›	—	›
— — Կիեվի — —	101 ›	50	›
— — Մոսկվայի — —	101 ›	50	›
— — Բեսարաբ. Տավր.—	100 ›	—	›
— — Նիժ. Սամար. —	101 ›	—	›
— — Վիլնայի —	100 ›	50	›
— — Թիֆլիսի—Ղ՚ և 43 տ.	98 ›	—	›
— —Բութայիսի-18 և 43 տ.	98 ›	—	›
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները	645 ›	—	›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	238 ›	—	›
Ռիբինսկ-Բոլոգովի ընկ.	81 ›	50	›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	93 ›	12	›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	93 ›	50	›
Օդէսայի — — .	92 ›	—	›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	83 ›	—	›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ, ՄՐԳԱՑԻՆ ԵՒ ԳԱԶԱՅԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Յէրկօվնայա փողոցում, Կօնստանտինօվի տան կից, որտեղ գտնվում է Լօբկо և ընկ. տպարանը)

Պատիւ ունեմ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերա նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱ ՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ:

Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՑԻԱՑԻ մի ՊՐՕՎԻԶՕՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենանոր ձևի մեքենաներ, նոյնպէս և ՋԻՎԻՆԻ հռչակաւոր ՖԻԼՏՐը, որը միակ է, որ աջողութեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և դերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:

Պրովիզորը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Շնորհով այն օժանդակ միջոցների, որ տալիս է դիտութիւնը անալիտիական քիմիայի ճիւղում, այսուհետև իմ գործարանում կը պատրաստվեն, բացի դեղատէրեան, մրգային և գազային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՋՐԵՐը, ինչպէս օրինակ՝ Վիչիի, Էմսի, Կարլսբադի, Մարիէնբադի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետևելով յայտնի հեղինակաւորների տուած կանոններին: Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հռչակաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի գերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ դրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ածխաթթու գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներդործելով հիւանդ կազմուածքի վրա:

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշդութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:

Տարաձայնութիւններից խուսափելու համար, խնդարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածողներին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ 35—50 (Ե)

„ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑՉԻ“

Նոր տպագրութիւնները

1) Երկրորդ տարի՝ երկրորդ տիպ, հիմնովին փոփոխած: Պարունակում է 100-ից աւելի նոր յօդուած, և բաղկացած է 144 երեսից: Գինն է 35 կոպէկ:

2) Չորրորդ տարի՝ երրորդ տիպ, ճոխացրած: Պարունակում է 60-ից աւելի նոր յօդուած, և բաղկացած է 308 երեսից: Երկրորդ տիպը բաղկացած էր 272 երեսից: Գինը առաջվանն է՝ 60 կոպէկ:

Գումարով առնողներին 20% զիջում: Ցօրինողին դիմողները ճանապարհածախս չեն վճարում:

Երրորդ տարի՝ (նախկին) երրորդ տիպ. գինն է 40 կոպէկ: Ծախվում է միայն գրավաճառանոցներում:

Ցօրինողի հասցէն. „Тифлисъ, Авлабаръ. учителюОванесу Назарянцъ“.

3—4 (Ե. Շ.)

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ:

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական ցնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն, և 7) գեղագրութիւն:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 25-ից: Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Լաբօրատօրնայա փողոցի վրա, № 11: Իսկ օգոստոսի 20-ից Աղէքսանդր Փրիդօնովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց, ուր որ անցնելու են կուրսերը: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՁՐԻԱՊԷՍ եղբ. Ծովհաննէսների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

14—20 (Ե. Շ.)

ԿԵՕԼԷՐԵԱՆ ԴԱԼՄԱՏԵԱՆ ԵՐԻՑՈՒԿ

Ուրիշ դրա նման միջոցների հետ համեմատելով, ամենազօրեղ միջոցն է միջատներից, որպէս են՝ լուանները, ուտիճները և այլն:

Ծախվում է գաւառներում բոլոր նշանաւոր առևտրականների մօտ. Մոսկվայում—Կեօլէրի և Ընկ. մօտ, Նիկոլսկայա փողոցի վրա:

№ 1 Ц. К. О. (2—3)

ԿԵՕԼԷՐԵԱՆ ՔԱՑԱԽԱՑԻՆ ԷՍՍԷՆՑԻԱ

Ցայսնի է, որ բարձր և լաւ յատկութիւնն է պատճառ ներկայումս

ԿԵՕԼԷՐԻ ՔԱՑԱԽԱՑԻՆ ԷՍՍԷՆՑԻԱՅԻ ընդարձակ տարածման, և այդ պատճառով հասկանալի է, որ ես առանձնապէս հետաքրքրված եմ նրանով, որպէս զի փոխանակ իմ այժմեան, այսինքն

ԿԵՕԼԷՐԻ ՔԱՑԱԽԱՑԻՆ ԷՍՍԷՆՑԻԱՅԻ, հասարակութեանը չառաջարկվէին գաւառներում քացախի անպիտան կեղծումները, որոնցով մինչև այժմ ես պարապում են մի քանի պարոններ: Լաւ

ԿԵՕԼԷՐԻ ՔԱՑԱԽԱՑԻՆ ԷՍՍԷՆՑԻԱ սպառողները պէտք է ի նկատի ունենան, որ յայտնի լաւ արտադրութիւնների ամեն տեսակ կեղծումները և նրանց նմանեցնելը բոլորովին ուրիշ նպատակներ ունեն, որոնք ոչինչ ընդհանուր չունեն գնողների շահերի հետ, և այդ պատճառով այդ առարկան գնելու ժամանակ նրանց միայն կարելի է խորհուրդ տալ

ԶԳՈՅՇ ԼԻՆԵԼ

Որքան կարող եմ դատել, ուրիշների հետ համեմատելով, իմ

ԿԵՕԼԷՐԻ ՔԱՑԱԽԱՑԻՆ ԷՍՍԷՆՑԻԱՆ մինչև այժմս համարվում է ամենալաւը, ամենաճեռնտուն և ամենահամեղը—և յոյս ունեմ, որ սրանից յետոյ կը մնայ նոյնը:

Ծախվում է գաւառներում բոլոր աւելի նշանաւոր առևտրականների մօտ, Մոսկվայում—Ր. Կէլէրի և Ընկ. մօտ. Նիկոլսկայա փողոցի վրա:

№ 1. Ц. К. О. (2—3)

Տալիս եմ յատկապէս ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասեր կրկնակի-իտալական և միւս սիստեմներով. հասցէն իմանալ „Մշակի“ խմբագրատանը:

3—4

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ սեպտեմբեր ամսիս 21-ին լինելու է աճուրդ (առանց կրկնաձրդի) կապալով տալու դպրոցի պատկանեալ 21 կրպակները, որոնք գտնվում են Ներսիսեան հին դպրոցի հանդէպ: Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10—12 ժամին: 1—3

Дозволено цензурою, Тифлисъ 12 Сентября 1888 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.